ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ոստիկանության կարիքների համար **ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՈՍՊ-ԷՏ** ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.05.2016թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին. հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ պետ, ոստ. գնդապետ Ռ.Խանզրադյան, անդամներ՝ ՀՀ ոստիկանության ՏՎ իրավախորհրդատու Գ. Մարտիրոսյան, ՀՀ ոստիկանության ԲՎ հոսպիտալի ֆին. մասի պետ Ս.Մանուկյան, ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստ.կապիտան Ս.Սեդրակյան, ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ ԳԱ բաժնի ավագ տեսուչ, ոստ.ավագ լեյտենանտ Մ.Հայրապետյան, քարտուղար՝ ՀՀ ԿԱ ոստիկանության ՏՎ ԳՀՓՁ բաժնի ավագ տեսուչ, ոստ. կապիտան Բ.Փահլևանյան:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները:***

ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՈՍՊ-ԷՏ** *ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել <<Արայ>> ՍՊԸ-ն, <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ն և <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ-ն:*

2. *Տվյալներ հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.*

2.1 *<<Արայ>> ՍՊԸ-ի, <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ի և <<Շուշան Տեխնիկս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած՝ մրցույթին մասնակցելու փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:*

3. *Մասնակիցների առաջարկած գները .*

Հ/Հ	Մասնակցի անվանումը	<<Տիգման Գրուպ >> ՍՊԸ		<<Արայ>> ՍՊԸ		<<Շուշան տեխնիկս>> ՍՊԸ	
		Գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Ընդհանուր գինը ՀՀ դրամ	Գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Ընդհանուր գինը ՀՀ դրամ	Գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	Սառնարան	-	750 000	683.33	820 000	-	1 235 000
2	Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ /բոլգարկա/	-	-	-	-	-	-
3	Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ	-	-	-	-	-	-
4	Օդորակիչ	-	-	-	-	-	-

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվեց որոշում՝ կողմ-5, դեմ-0:

***4**. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.*

***4.1** Քանի որ <<Արայ>> ՍՊԸ-ի գնային առաջարկի ընդհանուր գինը գերազանցում է նախահաշվային գինը* **ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՈՍՊ-ԷՏ** *ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող է ճանաչվում <<Տիգման Գրուպ>> ՍՊԸ-ն՝ որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:*

***4.2** Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել 3 /երեք/ աշխատանքային օրով՝ << Տիգման Գրուպ >> ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից կատարել հարցում՝ մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:*

ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՈՍՊ-ԷՏ *ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջների իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11:00-ին:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ոստ. գնդապետ՝ Ռ.Խանզրադյան

Անդամներ՝ Գ.Մարտիրոսյան

ոստ. կապիտան՝ Ս.Սեդրակյան

ոստ. ավագ լեյտենանտ՝ Մ.Հայրապետյան

Ս.Մանուկյան

Քարտուղար՝ ոստ. կապիտան Բ.Փահլևանյան